# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

- Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիսի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի Մասիս քաղաքի Կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:
- Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն՝

1.Տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացիները, ովքեր ունեն՝

ա/ բարձրագույն կրթություն

գ/ հանրային ծառայության առնվազն 4 տարվա ստաժ կամ առվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն 3 տարվա աշխատանքային ստաժ:

2. Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝

ա/տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն

բ/ ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն

գ/ համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

դ/աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ

ե/ ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն

զ/ առնվազն մեկ օտար լեզվի իմացություն

Մրցույթին մասնակցելու իրավունք չունի, այն անձը, ով՝

ա/ դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը մարված կամ վերացված չէ

**բ/** օրենքով արգելվել է ղեկավար պաշտոններ զբաղեցնել կամ ով զրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից

գ/ նախընթաց երեք տարիների ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և իրենց պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար

դ/ 65 տարին լրացած քաղաքացիները.

ե/ ներկայացրել է փաստաթղթեր, որոնք չեն համապատասխանում ՀՀ ՏԿԵՆ նախարարի 2020 թվականի մարտի 26-ի թիվ 02-Ն հրամանով հաստատված կարգի 12-րդ կետով սահմանված պահանջներին, լրիվ չեն կամ թերի են

* Մրցույթը կկայանա 2026 թվականի հունիսի 12-ին՝ ժամը 11:00-ին, Մասիսի համայնքապետարանի շենքում/ ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ 4 /:

* Դիմումները ներկայացնել Մասիսի համայնքապետարանի վարչական շենք, հասցե՝ Կենտրոնական հրապարակ թիվ 4, 4-րդ հարկ, 415 աշխատասենյակ, քարտուղաարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին, երկուշաբթիից ուրբաթ, ժամը 10:00-ից մինչև 18:00-ն:

Դիմումներն ընդունվում են մինչև 2026 թվականի մայիսի 29-ը ներառյալ:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

- ☑ Դիմում
- ☑ Մեկ լուսանկար՝ 3x4 չափսի
- ☑ Քաղվածք աշխատանքային գրքույկի կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին
- ☑ Ինքնակենսագրություն
- ☑ Անձնագրի կամ նույնականացման քարտի, բարձրագույն կրթության՝ դիպլոմի, (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները
- ☑ Տեղեկանք մշտական բնակության վայրից
- ☑ Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)

Փաստաթղթերը ներկայացնել անձամբ, անձը հաստատող փաստաթղթով:

Տնօրենի թափուր պաշտոնի հիմնական աշխատավարձի չափը կազմում է 207.000 ՀՀ դրամ:

Աշխատավայրը գտնվում է ՀՀ Արարատի մարզ Մասիս համայնք ք.Մասիս Դպրոցականների 1-ին նրբանցք 27/5 հասցեում:

Հեռ. /236/-4-30-40

Էլեկտրոնային հասցե՝ masiskadrer@inbox.ru